

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ներածություն	3
Տեղեկանք	4
1. «Հասարակագիտական հետազոտությունները ծրագիր»	5
1.1 Տեղեկատվական և հոգևոր անվտանգության խնդիրների ուսումնասիրություն.....	5
<i>«Մեր հաղթանակները նախագիծ»</i>	<i>5</i>
<i>Ազգային հիշողության հիմնախնդիրները տեղեկատվական անվտանգության համատեքստում</i>	<i>5</i>
1.2 Միջուկի հիմնախնդիրներ.....	6
1.3 Հայագիտական համակարգող-տեղեկատվական կենտրոնի 2008թ. գործունեության հիմնադրույթները	7
2. «Քաղաքական վերլուծությունները ծրագիր»	9
<i>Միջազգային քաղաքականություն</i>	<i>9</i>
<i>Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը.....</i>	<i>10</i>
<i>Հարավկովկասյան զարգացումներ.....</i>	<i>10</i>
<i>Մերձավոր և Միջին Արևելք</i>	<i>10</i>
<i>Էներգետիկ անվտանգության խնդիրներ</i>	<i>10</i>
<i>2008թ. հետազոտական ծրագրերը</i>	<i>11</i>
3. Ուսումնական ծրագիր	13
4. Տեղեկատվական ծրագիր.....	15
<i>2008թ. ծրագրերը</i>	<i>16</i>
5. Փորձագիտական խորհրդի աշխատանքները, կոնֆերանսներ, սեմինարներ և PR գործունեություն	18
6. «Գործունեության ապահովման ծրագիր»	19
<i>2008թ. ծրագրերը</i>	<i>19</i>
Հավելված 1. «Հասարակագիտական հետազոտությունները ծրագրի շրջանակներում հրապարակված աշխատանքները	21
Հավելված 2. «Քաղաքական վերլուծությունները ծրագրի շրջանակներում հրապարակված աշխատանքները.....	27
Հավելված 3. Հայաստանը և Հայությունը գլոբալ զարգացումներում. արդի վիճակը և մարտահրավերները. Նորավանքյան ընթերցումներ. 2008թ. թեմատիկ դասախոսությունների ցանկ	34
Հավելված 4. Փորձագիտական խորհրդի աշխատանքները, կոնֆերանսներ, սեմինարներ.....	37
Հավելված 5. Գործունեության ապահովման ծրագրի 2007թ. ծախսերը	39

Ներածություն

2007 թվականին Հիմնադրամն իրականացրել է աշխատանքներ «Հասարակագիտական հետազոտություններ, «Քաղաքական վերլուծություններ «Ուսումնական – Նորավանքյան ընթերցումներ, «Տեղեկատվական և «Գործունեության ապահովման ծրագրերի շրջանակներում՝ համաձայն Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված պլանների: 2008 թվականի հունվարի 1-ից «Հասարակագիտական հետազոտություններ ծրագրի հիման վրա գործելու է «Հայագիտական համակարգող-տեղեկատվական կենտրոնը, որի առաջնահերթ խնդիրը կլինի Հայության անվտանգությանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Նախատեսվում է նաև «Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ստեղծում, որի աշխատանքներն ընթանալու են ՀՀ և ԼՂՀ անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրության ուղղությամբ: «Հայագիտական համակարգող-տեղեկատվական և «Քաղաքագիտական կենտրոնների փոխլրացնող հետազոտությունների հրատարակման, տարածման, քարոզչության, ապահովման աշխատանքների կազմակերպումը կատարվելու է «Տեղեկատվական, «Ուսումնական և «Գործունեության ապահովման ծրագրերի միջոցով:

Հիմնադրամի առջև դրված նպատակներն են.

- Հիմնադրամը վերածել ինստիտուցիոնալ կառույցի և իրագործել ազգային ընտրանու ու հանրության քաղաքագիտական, հայագիտական և տեղեկատվական սպասարկումը:
- Ելնելով ազգային անվտանգության (կիրառական հայագիտության համատեքստում) հիմնադրույթներից՝ ձևավորել համարժեք պատկերացումներ Հայության (ՀՀ և ԼՂՀ հանրության և հայկական համայնքների) անվտանգության վերաբերյալ, մշակել մեր ազգային շահերին համապատասխան նախագծեր:
- Ձևավորել իրատեսական պատկերացումներ գլոբալ և տարածաշրջանային ռազմաքաղաքական իրավիճակի վերաբերյալ, մշակել ՀՀ, ԼՂՀ և Հայության անվտանգությանն առնչվող հնարավոր զարգացումների սցենարներ, փոխլրացման և ներգրավվածության սկզբունքների հիման վրա մշակել համապատասխան նախագծեր և առաջարկություններ:

Կատարվող հետազոտությունների հայեցակարգային ելակետերը.

- Կատարվող հետազոտություններում առանցքային է ընդունվում այն թեզը, որ գլոբալ հարթությունում արդեն իսկ ձևավորվել է բազմաբևեռ աշխարհակարգ, իսկ միջազգային հարաբերություններում գերակայում է Սառը պատերազմի տրամաբանությունը: Այդ գործոնները, մասնավորապես՝ Հարավային Կովկասում և հարակից տարածաշրջաններում, պայմանավորում են հակասությունների խորացում աշխարհագաղափարախոսական, աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ոլորտներում:
- Բազմաբևեռ համակարգում գործընթացները պայմանավորված են նաև աշխարհաքաղաքակրթական հակասություններով, և այդ համատեքստում կարևոր դերակատարում են ստանում տեղեկատվական ոլորտի (գաղափարախոսական, հոգևոր, մտավոր, մշակութային, հասարակագիտական, ազգագիտական և այլն) գործոնները:
- Վերոնշյալ դրույթները վկայում են ռազմաքաղաքական, տնտեսական և քաղաքակրթական գործընթացների սերտաձման մասին, ինչն իր հերթին թելադրում է Հիմնադրամում կատարվող հետազոտություններում միջդիսցիպլինար մոտեցման (մեթոդի) կիրառումը:

Տեղեկանք

*Հիմնադրամում աշխատում են 12 փորձագետ, տեղեկատվական-հրատարակչական ոլորտի 9 մասնագետ և 12 աշխատակից՝ սպասարկող անձնակազմ (ընդամենը՝ 33 աշխատակից), որոնցից 1-ը՝ գիտությունների դոկտոր, 6-ը՝ գիտությունների թեկնածու, 2 փորձագետ պատրաստում են թեկնածուական թեզ: 2007թ. հիմնադրամի կողմից հրապարակվել են՝ **307 տպագիր** աշխատանք (որոնցից 208-ը հեղինակել են «Նորավանք»-ի աշխատակիցները, 72-ը՝ հիմնադրամի աշխատանքներին ներգրավված փորձագետները, 27-ը՝ այլ վերլուծաբաններ: **Հրատարակվել են 3 մենագրություն, 1 գրքույկ, 8 համար ամսագիր, 1 համար թեմատիկ տեղեկագիր, 30 վերլուծական տեղեկագիր (ընդհանուր առմամբ - 43 հրատարակում):***

Կազմակերպվել են **1 միջազգային կոնֆերանս** և 13 սեմինար, ՋԼՄ-ին տրվել են տասնյակ հարցազրույցներ, հիմնադրամի աշխատակիցները մասնակցել են միջազգային և տեղական մի շարք գիտաժողովների: «Նորավանք»-ի ընթերցումներին շարքում իրականացվել է 10 դասախոսություն:

Հիմնադրամը համագործակցում է 4 արտասահմանյան, 6 տեղական հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ:

Ինտերնետի հայերեն, անգլերեն և ռուսերեն հատվածներում «Նորավանք»-ի վերաբերյալ կա մոտ **40.000 հիշատակում, Հիմնադրամի կայքի հաճախորդների թիվը 2007-ին կրկնապատվել է և կազմել է 34 000:**

1. «Հասարակագիտական հետազոտությունները ծրագիր

Ղեկավար՝ Թամարա Վարդանյան

Ծրագիրը ներառում է երկու թեմա. **«Տեղեկատվական և հոգևոր անվտանգության խնդիրների ուսումնասիրություններ և «Միջուկի հիմնախնդիրների ուսումնասիրություններ: Ծրագրի շրջանակներում հրատարակվել են 3 մենագրություն և 1 գրքույկ, 169 տպագիր աշխատանք (տես Հավելված 1):** Կազմակերպվել է «Հայկական համայնքներն արդի փուլում. գոյասպահանություն, հեռանկարները խորագրով միջազգային գիտազործնական կոնֆերանս, կոնֆերանսի նյութերի հրատարակում և Ց սեմինար:

1.1 «Տեղեկատվական և հոգևոր անվտանգության խնդիրների ուսումնասիրություններ

Ղեկավար՝ Գագիկ Հարությունյան

«Մեր հաղթանակները նախագիծ (Հայոց ռազմարվեստը հոգեբանական անվտանգության համատեքստում). նախագծի նպատակն է ուսումնասիրել հայկական ռազմարվեստի պատմությունը և մեր հաղթանակների վերաբերյալ տեղեկատվությունը դարձնել հանրային գիտակցության բաղադրամաս: Դա պետք է նպաստի.

- «Պարտվող ազգե լինելու բարդություններից ձերբազատմանը (հոգեբանական անվտանգություն):
- Զինված ուժերում քարոզչական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը (տեղեկատվական անվտանգություն):

Ստեղծվել է ընտրված **103** ճակատամարտերի վերաբերյալ պատմագիտական նյութերի բազա, որի հիման վրա **կազմվել և նախնական խմբագրման են ենթարկվել 72 նյութ:** Կատարվել է ժամանակագրական պարբերացում, առանձնացված ժամանակաշրջանների համար պատրաստվել են ներածական հոդվածներ: **Կազմվել են մատենագիտություն, ռազմական տերմինների բացատրական բառարան, պատրաստվել են 17 պատմական, 26 ռազմական գործողությունների քարտեզներ, 26 ճակատամարտերի սխեմաներ, 7 սխեմատիկ պատկերներ և համապատասխան պատկերազարդումներ: Արդեն հրատարակման է պատրաստ մատենաշարի առաջին հատորը:**

Ազգային հիշողության հիմնախնդիրները տեղեկատվական անվտանգության համատեքստում.

Կատարված աշխատանքներում անդրադարձ է կատարվում կոլեկտիվ և պատմական հիշողության հասկացություններին, դրանց փոխանցման մեխանիզմներին, էթնոմոբիլիզացիոն ներուժին ու քաղաքական ընտրանու կողմից դրանց օգտագործման ձևերին:

Մասնավորապես, **Ցեղասպանության** հարցի ուսումնասիրման շրջանակներում իրագործվել են աշխատանքներ, որոնցում Եղեռնի ուսումնասիրությունը մեթոդաբանական առումով տեղափոխվել է որակական նոր հարթություն և դիտարկվում է որպես պատմական հիշողության առաջնային բաղադրատարր: Զուգահեռներ անցկացնելով **Հոլոքոստի** հիշողության հետ իսրայելյան հասարակությունում՝ կարևորվում են **Հայոց ցեղասպանության** հիշողության պահպանման և մատուցման ձևերի, դրանց քարոզչական գործառնայի խնդիրները, որոնք քննարկում են աշխարհում ընթացող գործընթացները մինչ օրս կատարված ցեղասպանությունների ճանաչման և ժխտման համատեքստում:

Մշակութային անվտանգության ոլորտին է առնչվում *Հասմիկ Հմայակյանի «Հայ արվեստի և մշակույթի առանձնահատկությունները համաշխարհային քաղաքակրթության համատեքստում»* հիմնարար հետազոտությունը:

Հոգևոր անվտանգության ոլորտին է վերաբերում *Կարինե Տեր-Գրիգորյանի «Հայրեր, մայրեր, որդիներ»* աշխատությունը, որն արժանացել է *Վեհափառի* հավանությանը և ներկայումս տարածվում է Մբ. Էջմիածնի հոգևոր գրականության սփուման ցանցի միջոցով:

1.2 «Միյուռքի հիմնախնդիրներ»

Թեմայի դեկավար՝ Թամարա Վարդանյան

Թրիվիալի հայ համայնքը. Իրականացվում է թիֆլիսահայ համայնքի ներկայիս իրադրության ուսումնասիրություն: Կապ է պահպանվում տեղի հայ հասարակական գործիչների հետ: Առանձին ուսումնասիրվել են Ցեղասպանությանը նվիրված միջոցառումների կազմակերպման առանձնահատկությունները, գնահատվել հասարակական տրամադրություններն ու համայնքի անդամների ներգրավվածությունն այդ միջոցառումներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թիֆլիսահայության հիմնախնդիրները խորանալու միտումներ ունեն: **Դա պայմանավորված է նաև Վրաստանի իշխանությունների՝ կրթական ոլորտում անցկացվող «Քարեփոխումներով»,** որոնք էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզվով կրթություն ստանալու հարցում խոչընդոտներ են ստեղծել: Համայնքի էթնոմոբիլիզացիոն ներուժը շարունակաբար թուլանում է:

Ռուսաստանի և Վրաստանի հայ համայնքներ. Կատարված հետազոտություններից և «Հայկական համայնքներն արդի փուլում. գոյապահպանություն, հեռանկարներ և կոնֆերանսի նյութերի վերլուծությունից» հետևում է, որ.

- **Վրաստանդարի, Մտավորագրի երկրամասերում և Վրաստանում հայերը տեղացիների կողմից ընկալվում են որպես հիմնական տնտեսական մրցակից: Այսինքն՝ հայերը մրցունակ են, բայց այդ հանգամանքը նրանց վերածում է ռուսական և վրացական անառողջ ազգայնականության դրսևորման հիմնական թիրախի:**
- Հայ Առաքելական եկեղեցին շարունակում է մնալ ազգային ինքնությունը պահպանող հիմնական կառույցը: Մակայն նախկինում որոշակի դերակատարություն ունեցող կիրակնօրյա դպրոցները կորցրել են գրավչությունը, քանի որ երիտասարդներն ավելի շուտ նախընտրում են հաճախել օտար լեզուների և համակարգչային ուսուցման, քան հայոց լեզվի դասընթացներ, որն աշխատաշուկայում պահանջարկ չունի:

Իրաքի և Թուրքիայի հայ համայնքներ. Ուսումնասիրվում են իրաքահայ համայնքի առկա խնդիրները: Քննարկվել են համայնքի հեռանկարները պատերազմական իրադրության համատեքստում:

Թուրքական (հատկապես՝ Պոլսի) համայնքի հիմնախնդիրները քննարկվում են արմատական իսլամականների ակտիվացող գործունեության համատեքստում: Կատարվում են այլալեզու, այլադավան, ծպտյալ հայերի խնդիրներին վերաբերող աշխատանքներ:

Սյլ համայնքներ. Հիմնադրամի աշխատանքներին ներգրավված՝ «Էքսպերտե հանդեսի թղթակից Սերգեյ Մումյոննու կողմից ուշագրավ դիտարկումներ են կատարվել Չեխիայի հայ համայնքի վերաբերյալ: Քննարկվել են Իրանի հայ համայնքում առկա արտագաղթի

միտումները, ուսումնասիրվել են Սևծովյան ավազանում բնակվող հայության հիմնախնդիրները, համշենահայերի էթնիկ ինքնագիտակցության և հայկական սփյուռքին վերաբերող այլ հրատապ հարցեր:

Հայոց ազգային կապիտալը և հայ համայնքները. Գիտական և տեղեկատվական շրջանառության մեջ են դրվել հայ մատենագիտությանն անհայտ Գևորգ Դամասկոսցու կյանքին ու գործունեությանն առնչվող նյութերը (ի դեպ, վերջինս նաև Պրահայի առաջին սրճարանի հիմնադիրն է):

Պատրաստվել է **«Հայոց առևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում. վաղ միջնադար - 1918թ.է** աշխատանքը, պետպատվերի շրջանակում հրատարակվել է **«Հայերը և Բարունե գրքի ռուսերեն թարգմանությունը:** Պատրաստվում է հրատարակման երկլեզու (հայերեն, ռուսերեն) հրատարակություն «Արդի Ռուսաստանի 100 ամենաազդեցիկ հայերը. բիզնես և կենսագրական հանրագիտարան:

Հայկական համայնքներն արդի փուլում. գոյապահպանություն, հեռանկարներն միջազգային գիտագործնական կոնֆերանս. Հունիսի 19-20-ին կազմակերպվեց և անցկացվեց միջազգային գիտագործնական կոնֆերանս «Հայկական համայնքներն արդի փուլում. գոյապահպանություն, հեռանկարներն խորագրով: Կոնֆերանսի աշխատանքների կազմակերպման համար ձևավորվեց կազմկոմիտե (նախագահ՝ Գագիկ Հարությունյան, տեղակալ՝ Թամարա Վարդանյան): Կոնֆերանսի նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հետխորհրդային տարածքի հայկական համայնքներն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնցով պայմանավորված է իրադրությունը տեղերում:

2008 թվականից թեման շարունակվելու է «Նորավանքե ԳԿՀ Հայագիտական համակարգող-տեղեկատվական կենտրոնի «Համայնքների հիմնախնդիրները հայության անվտանգության համատեքստում և ծրագրի շրջանակներում:

1.3 «Հայագիտական համակարգող-տեղեկատվական կենտրոնի 2008թ. գործունեության հիմնադրույթները

Կենտրոնի աշխատանքները իրագործվելու են երեք ծրագրերի՝ «Հայության, մասնավորապես հայ համայնքների անվտանգության խնդիրները, «Այլալեզու, այլադավան հայության, մասնավորապես Թուրքիայի իսլամացած հայերի խնդիրները, «Հայության հիշողության քաղաքականության խնդիրները շրջանակներում, որոնք մասնավորապես ենթադրում են հետևյալ գործառույթները:

1. Համայնքների խնդրով միջազգային երկրորդ գիտագործնական կոնֆերանսի կազմակերպում, նյութերի մշակում և հրատարակում:
2. Հայկական համայնքների վեբկայքերի տվյալների համալիր շտեմարանի ստեղծում, այդ վեբկայքերի պատասխանատուների հետ համագործակցության հաստատում, շտեմարանի տվյալների տեղադրում նորավանքյան վեբկայքի «Համայնքները բաժնում, նշված պատասխանատուների մասնակցության ապահովում համայնքների գծով գիտագործնական երկրորդ կոնֆերանսին:
3. Հայագիտական կենտրոնների մասին տվյալների շտեմարանի կազմման սկզբունքների ստեղծում, տեղեկատվության որոնում, տվյալների բազայի աստիճանական լրացում, կապերի հաստատում, տեղեկատվության փոխանակում: Ձեռք բերված որակական տեղե-

կատվության տրամադրում ՀՀ կրթության և գիտության ոլորտի համապատասխան հաստատություններին:

4. Ռուսաստանի ազդեցիկ հայազգի գործիչների մասին հանրագիտարանի ստեղծում:
5. Շարունակել աշխատանքները Սփյուռքում գործող հասարակական կազմակերպությունների շտեմարանի ստեղծման ուղղությամբ, իրականացնել ներհամայնական ռեսուրսների գնահատում նրանց գործունեության մոնիթորինգի միջոցով, նոր կապեր հաստատել և ամրապնդել առկա կապերը Սփյուռքում գործող հայկական ՀԿ-ների և ակտիվ լիդերների հետ: Հնարավորության սահմաններում իրականացնել համատեղ ծրագրեր:
6. Արևմտյան Հայաստանում բնակվող այլալեզու և, մասնավորապես, կրոնափոխ հայության (իբրև ամբողջություն և իբրև բեկորներ) ուսումնասիրության ձեռնարկում ինչպես տեղում հավաքված և հավաքվելիք նյութերի, նույնպես և եվրոպական երկրներում գտնվող համապատասխան մասնագետների հետ հանդիպումների իրականացման արդյունքում: Թուրքիայի Հանրապետությունում բնակվող մահմեդական հայերի նկատմամբ հայեցակարգային մոտեցման մշակում, «Տեղեկագրիե առանձին համարի հրատարակում: Կրոնափոխ հայության մասին առկա տեղեկատվության համակարգում, համապատասխան շտեմարանների նախաձեռնում, լրացում:
7. Հեռավար ուսուցման ուղղությամբ Հայաստանում տարվող աշխատանքների վիճակի պարզում, հայերենի ու հայոց մշակույթի ուսուցման վերաբերյալ համակարգչային իրականացմամբ ուսուցողական ծրագրերի առկայության ճշգրտումներ, նոր ծրագրերի մշակման անհրաժեշտության հստակեցում, հարցի կենսագործման համար հնարավոր ռեսուրսների վերհանում, նոր ծրագրաշարերի ստեղծման գործընթացի ձեռնարկում:
8. Հանրամատչելի հոգևոր գրականության հրատարակման գործի շարունակում, համացանցային եղանակով տեղեկատվության տարածում:
9. Համաշխարհային հրեության գործունեության փորձի ուսումնասիրման շարունակում, Հայության հետ նրանց համագործակցության հնարավոր եզրերի տեսական և գիտագործնական որոնումներ:
10. Հայության հիմնախնդիրներով զբաղվող նոր ձևաչափերի համար պարբերական քննարկումների անցկացում, տեսական և գործնական բնույթի առաջարկների մշակում («Նորավանքե-ի այլ ծրագրերի աշխատակիցների հետ համատեղ:

2. «Քաղաքական վերլուծությունները ծրագիր

Ղեկավար Մարգիս Հարությունյան

Հետազոտությունների ուղղվածությունը.

- ձևավորել համարժեք պատկերացումներ գլոբալ և տարածաշրջանային գործընթացների վերաբերյալ,
- մշակել Հայաստանի ազգային անվտանգությանն առնչվող քաղաքական հնարավոր զարգացումների սցենարներ, նախագծեր,
- իրագրել Հայաստանի ընտրանուն և հանրությունը քաղաքական իրավիճակի շուրջ առկա փորձագիտական գնահատականների մասին:

Միջազգային քաղաքականություն

Բազմաբևեռ աշխարհակարգ. որպես միջազգային քաղաքականության հիմնական միտում պետք է նշել Միացյալ Նահանգների նահանջն իր գլոբալ մենաստիրական դիրքերից: Այդ գործընթացը պայմանավորված է ԱՄՆ ու նրա մերձավոր դաշնակիցների գաղափարախոսական ու տնտեսական թուլացմամբ: ԱՄՆ-ը շարունակում է հանդիսանալ մտավոր ու նյութական ռեսուրսներ ունեցող թիվ 1 տերությունը, սակայն փաստն այն է, որ Վաշինգտոնում ամրագրվում է այն դրույթը, որ անհնար է միակողմանիորեն փոփոխություններ մտցնել թե՛ գլոբալ քաղականությունում, թե՛ տարածաշրջանային փոխազդեցություններում, ինչպես որ ենթադրվում էր 1990-ական թթ.: Իրանի նկատմամբ ԱՄՆ մոտեցման վերանայումը դրա կարևորագույն վկայությունն է:

Թեև **գործոնների** իմաստով ընթացող գործընթացում աչքի են զարնում՝

- ֆրանսիական քաղաքականության ակտիվացումը (ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սերտացումը, Իտալիայի ու Իսպանիայի հետ Միջերկրածովյան միության հիմնումը),
- «տեղերումե ԱՄՆ դաշնակիցներ համարվող երկրների ինքնուրույնության շարունակվող աճը (Շրյոդերի Գերմանիայից հետո նույն տրամաբանության մեջ են մտել այսօրվա Իսրայելի, Թուրքիայի ու Պակիստանի քաղաքականությունները),
- Կոսովոյի հարցով պայմանավորված նոր իրողությունը միջազգային իրավաքաղաքական հարթությունում,

սակայն գոյություն ունեն երկու գործոններ, որոնք հատկապես կարճաժամկետ հեռանկարում կարող են առավելագույն ազդեցություն ունենալ գլոբալ քաղաքականության վրա՝ *ամերիկա-իրանական հնարավոր պայմանավորվածությունները և ՌԴ - ԱՄՆ ու ՉՖՀ - ԱՄՆ հակասությունները:*

Ուշագրավ է, որ **ԱՄՆ - Իրան** հավանական պայմանավորվածությունների օրակարգն ընդգրկում է Վաշինգտոնի ու Թեհրանի միջև եղած հիմնական երկու հակասությունները՝

- *իրանական միջուկային ծրագիրը.* ԱՄՆ-ը հայտարարեց, թե Իրանի միջուկային ծրագիրը ներկայումս չունի ռազմական բնույթ,
- *ապագա իրավիճակն Իրաքում.* 2007թ. նոյեմբերի 26-ի ամերիկա-իրաքյան ռազմաքաղաքական պայմանագիրը վկայում է Իրաքի հարցում ԱՄՆ - Իրան սկզբունքային փոխհամաձայնության մասին:

Մյուս կողմից՝ **ԱՄՆ-Ռուսաստան** ձևաչափում նկատվող հակասությունները նույնպես ունեն հիմնարար բնույթ՝

- *ռազմաքաղաքական.* Արևելյան Եվրոպայում և Հարավարևելյան Ասիայում ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղակայմանն ու ընդլայնմանը, ինչպես նաև ՆԱՏՕ-ին Վրաստանի և Ուկրաինայի անդամակցության հեռանկարը,

- *տնտեսական-էներգետիկ ոլորտ*. հակասություններն այս ոլորտում նախնառաջ դիտարկվում են Ռուսաստանի տնտեսական կարողությունների վերականգնման համատեքստում (ամերիկյան փորձագիտական գնահատականների համաձայն՝ էներգակիրների միջազգային գնի ներկա մակարդակի պահպանման դեպքում 2017թ. Ռուսաստանը կունենա Եվրոպայում ամենամեծ տնտեսությունը՝ \$5 տրլն, CSIS, *Alternative Futures for Russia to 2017*)¹:

Հայաստանի պարագայում հատկապես կարևորվում է այն, որ նման իրավիճակը կարող է լուրջ նախադրյալներ ստեղծել հարավկովկասյան փոխդասավորվածության փոփոխության համար, ինչը կարող է հետևանքներ ունենալ դարաբաղյան status quo-ի վրա:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը

Չնայած ԼՂՀ հիմնախնդրի առնչությամբ նոր լուրջ նախաձեռնություններ չպետք է սպասել այնքան ժամանակ, քանի դեռ Հարավային Կովկասում շահեր ունեցող ուժի կենտրոններից մեկը կամ մի քանիսը չեն փորձի փոխել տարածաշրջանային փոխդասավորվածությունը, սակայն մասնավորապես ամերիկա-ռուսական հակասությունների հետագա խորացումը կարող է շոշափելի ներգործություն ունենալ այս խնդրի վրա: Այդ իմաստով պետք է որոշակի զարգացումներ սպասել ՆԱՏՕ-ին Վրաստանի հավանական անդամակցությունից և Կոստվոյի հավանական անկախությունից հետո:

Հարավկովկասյան զարգացումների իմաստով պետք է կարևորել.

- Հարավային Կովկասի շարունակվող ռազմականացումը,
- Կոստվոյի շուրջ ընթացող զարգացումների և ՆԱՏՕ-ին Վրաստանի հավանական անդամակցության ներգործությունը տարածաշրջանում,
- նոր որակ ձեռք բերող Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցությունը,
- աշխարհաքաղաքական նոր իրադրությունում հայտնված **Իրանի և Թուրքիայի քաղաքականությունները** Հարավային Կովկասում:

Մերձավոր և Միջին Արևելք

Այս տարածաշրջանին առնչվող զարգացումներում շարունակում է առաջնային հանդիսանալ ամերիկա-իրանական հարաբերությունների հարցը, սակայն 2007թ. երկրորդ կեսը սկսեց աստիճանաբար առանձնանալ Թուրքիայի քաղաքականությանը վերաբերող նոր բնույթի իրողությունների ի հայտ գալով:

ԱՄՆ - Իրան ձևաչափում նկատվող փոփոխություններով են թելադրված նաև նոր զարգացումները իսրայելա-պաղեստինյան հակամարտությունում, Լիբանանում, Սիրիայի շուրջ առկա իրավիճակում, Իրաքում և ընդհանուր առմամբ՝ արաբա-իրանական հարաբերություններում: Հիմնավորված է թվում այն տեսակետը, ըստ որի՝ ամերիկա-իրանական պայմանավորվածությունները ոչ միայն վկայում են տարածաշրջանում Թեհրանի ազդեցության աճի մասին, այլև հիմք են դառնում տարածաշրջանային մի շարք հարցերում նոր իրավիճակի հաստատման համար:

Ներկայացվածի ֆոնին նորություն է հանդիսանում **Թուրքիայի նոր քաղաքականությունը**: Անկարայի հակասությունները ԱՄՆ-ի, Եվրամիության և Իսրայելի հետ ակնհայտ դարձրին Մերձավոր Արևելքում, Բալկաններում, Սև ծովի ավազանում ու Հարավային Կովկասում տարվող թուրքական քաղաքականությունը, որի նպատակն է

¹ Գագիկ Հարությունյան, «Նոր աշխարհաքաղաքական իրողություններ», «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, «Նորվանք» ԳԿՀ, թիվ 20 (28), 2007թ., էջ 3: Գագիկ Տեր-Հարությունյան, «Նոր աշխարհաքաղաքական իրողություններ», «Հանրապետական» ամսագիր, թիվ 11 (53), 2007թ., էջ 20:

Անկարայի ազդեցությամբ առանձնացող նոր ձևաչափերի հիմնումը կամ հների ամրապնդումը:

Էներգետիկ անվտանգության խնդիրներ

Էներգետիկայի ոլորտում պետք է առանձնացնել հետևյալ երեք հանգամանքները.

- **Իրագործվող նախագծերի ավարտ** – շահագործման հանձնվեցին երկու գազատարներ՝ «Իրան-Հայաստան» և «Բաքու-Թբիլիսի-Էրզրում», ինչը ստեղծեց որակապես նոր իրավիճակ Հարավային Կովկասի էներգետիկ քարտեզում. Հայաստանն առաջին անգամ ստացավ ռուսականին այլընտրանքային գազ՝ Իրանից, իսկ Ադրբեջանը վերածվեց գազ արտահանող պետության:
- **Նոր նախագծերի իրագործման սկիզբ** – ստորագրվեց «Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս» նավթատարի կառուցման մասին ռուս-բուլղարա-հունական համաձայնագիրը, ինչպես նաև Մերձկասպյան գազատարի կառուցման մասին ռուս-դադախա-թուրքմենական արձանագրությունը: Սրանով իսկ մատնանշվեց հետխորհրդային տարածքում էներգետիկ նոր նախագծերի իրականացման ակտիվ փուլի սկիզբը, որում ազդեցիկ մասնակցություն ունի Ռուսաստանը:
- **Հայաստանը** ստեղծեց բավական լուրջ քաղաքական և տնտեսական հիմք երկրի տարածքում նոր ԱԷԿ-ի և նավթավերամշակման գործարանի կառուցման համար:

Հայաստանի մասով մերձավորարևելյան նոր զարգացումների հետևանքներն առաջին հերթին կարող են իրենց զգացնել ոչ թե երկկողմ (հայ-իրանական, հայ-թուրքական) հարաբերությունների ձևաչափում, այլ ողջ Հարավային Կովկասի նկատմամբ Թուրքիայի և Իրանի, փաստորեն, նորացված քաղաքականությունների առումով: Մյուս կողմից՝ կարևոր է առանձնացնել այն հանգամանքը, որ Թուրքիայի հակասություններն արևմտյան ուժի կենտրոնների (հատկապես՝ Իսրայելի) հետ Երևանի համար «հնարավորությունների պատուհան» են բացում այդ ուղղությամբ:

2008թ. հետազոտական ծրագրերը

2008թ. «Քաղաքական վերլուծություններ և ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքները միտված են լինելու երկու հիմնական դրույթների իրականացմանը.

- **ձևավորել համարժեք պատկերացումներ գլոբալ և տարածաշրջանային գործընթացների վերաբերյալ,**
- **մշակել ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանը վերաբերող ու այդ իմաստով հայությանն առնչվող քաղաքական հնարավոր զարգացումների սցենարներ, նախագծեր:**

Հետազոտական մաս

Գլոբալ զարգացումներ

Հետազոտության առարկա են հանդիսանալու գլոբալ հարթությունում ընթացող, ուժի առաջնային կենտրոնների համար կարևոր նշանակություն ունեցող և համակարգաստեղծ բնույթ կրող աշխարհաքաղաքական զարգացումները, որոնք ձևավորում են գլոբալ քաղաքականության տրամաբանությունը:

Տարածաշրջանային զարգացումներ

Տարածաշրջանային զարգացումների առումով հետազոտության օբյեկտ են այն տարածաշրջանները, որոնք ուղղակի և/կամ կարևոր առնչություն ունեն ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգության հետ: Այդ տարածաշրջաններն են՝

- Հարավային Կովկասը,
- Մերձավոր Արևելքը,
- Սևծովյան ավազանը,
- Կասպյան ավազանը,
- Կենտրոնական Ասիան:

Հետազոտության բնույթի իմաստով հետազոտական աշխատանքի առարկա են հանդիսանալու տարածաշրջանային հարթությամբ առանձնացած այն գործընթացները, իրադարձությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն ուժերի տարածաշրջանային փոխազդեցության տեսանկյունից:

Հայաստանին անմիջականորեն հարևան երկրները

Շարունակվելու են Հայաստանին անմիջականորեն հարևան չորս երկրների՝ Վրաստան, Ադրբեջան, Իրան, Թուրքիա, ներքին ու արտաքին քաղաքականությունների և դրանց առնչվող ռազմական ու տնտեսական զարգացումների հետազոտությունները: Ուշադրության կենտրոնում են լինելու հատկապես այն գործընթացները, որոնք վերաբերում են ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանը:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը ՀՀ, ԼՂՀ ու Հայության ազգային անվտանգությանն առնչվող առանցքային կետերից է: Հիմնախնդիրն վերաբերող զարգացումները շարունակելու են հանդիսանալ ծրագրի հետազոտական աշխատանքի օբյեկտ:

Էներգետիկ զարգացումներ

Առաջիկա տարիներին Հայաստանի էներգետիկ անվտանգությանն առնչվող հատվածի նշանակությունը միայն աճելու է պետության ողջ ազգային անվտանգության համակարգում: 2008թ. նույնպես էներգետիկ զարգացումներին վերաբերող ուսումնասիրությունները ծրագրի հետազոտական աշխատանքների մասն են կազմելու:

Նախագծերի մշակման մաս

2008թ. «Քաղաքական վերլուծություններն ծրագրի շրջանակներում իրականացվելու են ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանն ու հայությանը վերաբերող քաղաքական զարգացումների սցենարային մշակումներ, որոնց հիմնական նպատակն է լինելու հայրենի կիրառական քաղաքականության համար ապահովել Հայաստանի ու Հայության շահերն արտահայտող իրավիճակի զարգացման նախագծեր:

ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանն առնչվող նախագծերը վերաբերելու են առաջիկայում ՀՀ և ԼՂՀ անվտանգության համար կարևոր նշանակություն ունեցող ուղղություններին.

- Ղարաբաղյան հիմնախնդիր,
- Վրաստան, ներքին ու արտաքին քաղաքական զարգացումներ,
- հայ-թուրքական հարաբերություններ,
- ՀՀ ու ԼՂՀ էներգետիկ անվտանգությանը վերաբերող զարգացումներ:

Հայության անվտանգությանն առնչվող նախագծերն առնչվելու են համահայկական (միջազգային) տարաբնույթ ձևաչափերի ստեղծմանը:

Այս հատվածին վերաբերող նախագծերի մշակման ընթացքում նախատեսվում է համակարգել աշխատանքները «Հայագիտական կենտրոնի հետ:

3. Ուսումնական ծրագիր *«Նորավանքյան ընթերցումներ»*

Ղեկավար՝ Հարություն Մարության

«Նորավանքե-ը, որպես արդի «ուղեղային կենտրոնների» ոճով գործող ՀՀ ամենախոշոր հաստատություններից մեկը, ձգտելով աշխատել այն նույն չափանիշներով, որոնք գործում են աշխարհի նման այլ կենտրոններում, իր գործունեության կարևոր ոլորտ է նկատում ուսումնական ծրագրերի իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում պարբերական քննարկումների ճանապարհով ճշտվել ու հստակեցվել են ուսումնական ծրագրի առջև դրված հայեցակարգային նպատակները և խնդիրները, դրանց լուծման ուղիները:

Հայաստանյան գիտական թե կրթական իրականության մեջ, համաձայն եղած տեղեկությունների, ներկայումս բացակայում են Հայաստանը և Հայությունը գլոբալ զարգացումների համատեքստում դիտարկող և գիտակրթական ու գիտագործնական նպատակներ հետապնդող նպատակային քննարկումներ: Տեղեկատվական դաշտում, անգամ մասնագետների համար, հաճախ դժվար է լինում կողմնորոշվել, զանազան էլ էականն ու երկրորդականը, հասկանալ սեփական պետության ու ժողովրդի տեղը, դերն ու սպասվող մարտահրավերները, դրանց դիմակայելու ձևերն ու միջոցները:

Առկա բացը լրացնելու ուղղությամբ 2007թ. առաջին կիսամյակում ձևավորվեց «Հայաստանը և հայությունը գլոբալ զարգացումներում. արդի վիճակը և մարտահրավերները. նորավանքյան ընթերցումներ» խորագրով դասախոսությունների առաջարկվող շարք, որը նախատեսում էր շաբաթական պարբերականությամբ, մասնագետների որոշակի շրջանակների համար կազմակերպել տվյալ բնագավառում հանրապետության լավագույն փորձագետների մասնակցությամբ անցկացվող դասախոսություն-քննարկումներ: Պլանավորվում էր ապահովել դասախոսությունների թեմատիկ բազմազանությունը, դասախոսների մասնագիտական սկզբունքով ընտրությունը, ինչպես նաև ունկնդիրների պրոֆեսիոնալ շրջանակը: Մա ենթադրում է մագիստրոսական կամ բարձրագույն կրթություն, քննարկվող թեմաների շուրջ որոշակի գիտական և աշխատանքային փորձառության տեր մարդկանց ներկայությունը, ինչը հնարավորություն կտար երիտասարդ հետազոտողներին հասարակագիտական և քաղաքագիտական ոլորտի արդի պատկերացումների մասին իրազեկել ավելի մասնագիտորեն: Նախատեսվում էր, որ դասախոսությունների յուրաքանչյուր շարք միտված է լինելու որոշակի հիմնախնդիրների լուսաբանմանը և առկա կամ ծագող հարցադրումների պատասխանների որոնմանն ու, այդպիսով, ուղղորդված է լինելու որոշակի լսարանի:

«Հայաստանը և հայությունը գլոբալ զարգացումներում. արդի վիճակը և մարտահրավերները» նորավանքյան ընթերցումները ներառում են ութ խումբ հարցադրումներ.

- Քաղաքակրթության և ինքնության հիմնախնդիրներ,
- Արդի հայության ժողովրդագրական և հայաստանյան հասարակության սոցիալական հիմնախնդիրները,
- Հայկական համայնքների հիմնախնդիրներ,
- Ազգային անվտանգության հիմնախնդիրներ,
- Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրներ,
- Էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներ.

2007թ. առաջին կիսամյակի ավարտի պլանով ենթադրվում էր, որ հիմնախնդիրները կլուսաբանվեն շուրջ քառասուն թեմատիկ դասախոսությունների միջոցով, որոնցում ներգրավված կլինեն ավելի քան երեսուն հեղինակավոր մասնագետներ: Նախատեսվում էր, որ յուրաքանչյուր դասախոսություն ու դրան հաջորդող քննարկում իրենց արտացոլումը կգտնեն «Նորավանքե ԳԿՀ վեբկայքում:

«Նորավանքյան ընթերցումներե-ի հաջող ընթացքի ու արդյունքների պարագայում այն կարող է դառնալ կարևոր քայլ «Համահայկական համալսարանի» ստեղծման ճանապարհին, խնդիր, որը մնում է «Նորավանք գիտակրթական հաստատության առաքելություններից մեկը:

2007թ. հոկտեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 12-ը, շաբաթական պարբերականությամբ, կայացել են հետևյալ 10 դասախոսությունները.

Շարք 1. Քաղաքակրթության և ինքնության հիմնախնդիրներ

1. Տիգրան Սարգսյան, «Հայկական քաղաքակրթությունը որպես բեկումնային նախագիծ», 4 հոկտեմբերի
2. Բարկեն Վարդանյան, «Հավատք, գաղափարախոսություն և պետականություն», 10 հոկտեմբերի
3. Գագիկ Հարությունյան, «Հայկական ուրույն քաղաքակրթությունը ազգային անվտանգության համատեքստում», 17 հոկտեմբերի
4. Ռուբեն Սաֆրաստյան, «Հայ պահպանողականությունը համաշխարհային պահպանողական մտքի ծիրում», 24 հոկտեմբերի
5. Լևոն Աբրահամյան, «Ազգային ինքնության կերտման և հաստատման չորս մոդելները», 31 հոկտեմբերի
6. Լևոն Աբրահամյան, «Հայոց ազգ-պետություն^օն, թե^օ ընտանիք-պետություն», 7 նոյեմբերի
7. Թամարա Վարդանյան, «Ազգայնականության էությունը և գործառույթները», 14 նոյեմբերի

Շարք 2. Արդի հայության ժողովրդագրական և հայաստանյան հասարակության սոցիալական հիմնախնդիրները

8. Լեմվել Վալեսյան, «Հայերն արդի աշխարհում. ժողովրդագրական ընդհանուր պատկերը», 23 նոյեմբերի
9. Շավարշ Քոչարյան, «Հայաստանի ժողովրդագրությունը համաշխարհային ժողովրդագրական զարգացումների համատեքստում», 28 նոյեմբերի
10. Ահարոն Ադիբեկյան, «Ազգի մտային և անձնային կարողությունների համապատասխանությունը 21-րդ դարի մարտահրավերներին», 5 դեկտեմբերի:

2008 թվականին նախատեսվում է շարունակել դասախոսությունները: Կազմված և համաձայնեցված է դասախոսությունների ցանկը (տես **Հավելված 3**):

4. Տեղեկատվական ծրագիր

Ղեկավար՝ Սևակ Սարուխանյան

Ծրագրի գործունեության նպատակներն են. իրականացնել «Նորավանքե ԳԿՀ հրատարակչական աշխատանքները (պարբերականներ, գրքեր, ժողովածուների հրատարակություններ և այլն), մշակել, տեղակայել, կանոնավոր կերպով գորարկել ու նորացնել ԳԿՀ ինտերնետային կայքը, ձևավորել գրադարանը, ապահովել նյութերի արդյունավետ տարածումը շահագրգիռ կազմակերպությունների և անհատների շրջանում, ամրապնդել «Նորավանքե ԳԿՀ կայքերը շահագրգիռ հաստատությունների և անհատների հետ: 2008 թվականից ծրագրի շրջանակներում գործելու է նաև հետազոտական-վերլուծական թեմա՝ «Տեղեկատվական և հոգևոր անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրություններ: **Ծրագրի շրջանակներում 2007թ. հրատարակվել են 3 մենագրություն, 1 գրքույկ, 8 համար ամսագիր, 1 համար թեմատիկ տեղեկագիր, 30 վերլուծական տեղեկագիր (ընդհանուր առմամբ - 43 հրատարակում):**

Արման Կիրակոսյանի «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը» մենագրությունը (վերահրատարակում ԱԳՆ պատվերով): Հետազոտությունը կատարվել է 2006 թվականին, Հիմնադրամի պատվերով: Այն լույս է տեսել հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով և նախատեսված է դիվանագետների, պատմաբանների, քաղաքագետների, միջազգային իրավունքի մասնագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար:

Կարինե Տեր-Գրիգորյանի «Հայեր, մայրեր, որդիներ» գրքույկը: Աշխատությունը նվիրված է քրիստոնեական կրթության հարցերին և կատարվել է Հիմնադրամի պատվերով ու Հայ Առաքելական եկեղեցու հետ ընթացող համագործակցության շրջանակներում: Տպաքանակը տրամադրվել է Հայ Առաքելական եկեղեցուն՝ տարածելու նպատակով:

Խաչատուր Դադայանի «Հայերը և Բաքուն» գրքի ռուսերեն հրատարակումը: Գրքում ներկայացված է բաքվահայության պատմությունը: Փաստված է այն վիթխարի ներդրումը, որ կատարել են հայերը նավթարդյունաբերությունում, առևտրատնտեսական ոլորտում և քաղաքի մշակութային կյանքում: Փաստագրական նյութի հիման վրա նկարագրված է 1918թ. թուրքերի և ադրբեջանցիների կողմից Բաքվում իրականացված հայոց ցեղասպանությունը:

Վաչե Հովսեփյանի «Гарегин Нжде и КГБ» գիրքը: Պետական անվտանգության գնդապետ Վաչե Հովսեփյանի գիրքը նվիրված է ականավոր քաղաքական և պետական գործիչ Գարեգին Նժդեհի կյանքի այն հատվածին, երբ նա 1952-1953թթ. գտնվում էր ՀՍՍՀ Պետական անվտանգության նախարարության երևանյան բանտում:

«21-րդ ԴԱԸ հանդես-ի 8 համար. Հրատարակվում է 2004-ից և քաղաքագիտական-վերլուծական ուղղվածության միակ հանդեսն է ՀՀ-ում, որը հրատարակվում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Առաջին կիսամյակում հրատարակվել են «21-րդ ԴԱԸ հանդեսի 1 (15), 2 (16), 3 (17), 4 (18) “21-й БЕК” ռուսալեզու հանդեսի 1 (5), 2 (6) համարները: 2007-ի հունիսին հրատարակվել է **«21-st Century»** անգլիալեզու հանդեսի առաջին, իսկ դեկտեմբերին՝ երկրորդ համարը: Աճել է հանդեսի բաժանորդագրության քանակը, որը ներկայումս կազմում է 200 օրինակ:

«Գլոբուսե տեղեկագրի 20 համար և 1 հավելված. Տեղեկագիրը նպատակ ունի ՀՀ քաղաքական ընտրանուն համակարգված ձևով տրամադրել տարածաշրջանային և

միջազգային զարգացումների վերաբերյալ վերլուծություններ, ինչպես նաև ներկայացնել այն արդիական հիմնախնդիրները, որոնք առնչվում են հայությանը, կիրառական հայագիտության և տեղեկատվական անվտանգության հիմնահարցերին: Տեղեկագրի համարներում տպագրվել է 191 նյութ, որոնցից 114-ը հեղինակել են «Նորավանքե ԳԿՀ աշխատակիցները:

«Գլոբուս Էներգետիկան տեղեկագրի 9 համար. Հրատարակվում է 2007-ի ապրիլից, «Նորավանքե-ի և «ՀայՌուսԳազԱրդե ՓԲԸ միջև ձևավորված համագործակցության արդյունքում: Տեղեկագրում զետեղվում են վերլուծություններ ՀՀ և տարածաշրջանային էներգետիկ զարգացումների վերաբերյալ: Տեղեկագրի համարներում տպագրվել է 78 նյութ, որոնցից 11-ը հեղինակել են «Նորավանքե ԳԿՀ աշխատակիցները:

www.noravank.am կայքում զետեղվում են Հիմնադրամի վերլուծական հրապարակումները և հետազոտությունները, ինչպես նաև «Նորավանքե-ի գործունեությանը վերաբերող այլ նյութեր: Ներկայումս www.noravank.am-ը Հայաստանում գործող վերլուծական ամենախոշոր ինտերնետային ռեսուրսն է, որից օգտվում են ավելի քան **80 երկրում, հիմնականում` Ռուսաստան, ԱՄՆ, Գերմանիա, Ադրբեջան, Վրաստան, Ուկրաինա և Իսրայել:**

2007-ին կայքէջում զետեղվել է 477 **նյութ, որոնցից 207-ը հայերեն, 194-ը` ռուսերեն, 76-ը` անգլերեն բաժիններում,** ինչը գրեթե կրկնակիով ավելի է անցած տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ: 2007թ. կայք այցելել է 34 000 մարդ: 2007-ի հունիսից գործում է լայն տեխնիկական-տեղեկատվական հնարավորություններ ունեցող նոր կայքը:

Գրադարան. 2007թ. գրադարանը համալրվել է **280 անուն գրքերով և ամսագրերով: Այսօր գրադարանային ֆոնդում կա մոտ 2200 կտոր գրականություն:** Բաժանորդագրված է մոտ **70 ընթերցող,** այդ թվում` ԵՊՀ, Սլավոնական համալսարանի և ՀՀ ԳԱԱ աշխատակիցներ: Հիմնադրամը սկսել է փոխանակման ծրագրի շրջանակներում համագործակցել **ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հետ: «21-րդ ԴԱԸ հանդեսը ԱՄՆ դեսպանատան կողմից պարբերաբար ուղարկվել է Կոնգրեսի գրադարան:** Փոխանակման ծրագրի շրջանակներում «Նորավանքե-ը ստանում է հասարակագիտական-քաղաքագիտական ուղղվածության գրքեր:

Կապեր գիտական, վերլուծական և ուսումնական կենտրոնների հետ. Առաջին կիսամյակում ամրապնդվել կամ հաստատվել են կապեր հետևյալ կազմակերպությունների հետ.

1. «ՀայՌուսԳազԱրդե ՓԲԸ
2. Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ, Մոսկվա
3. «Քաղաքական հետազոտությունների կենտրոն, Մոսկվա
4. Ստրատեգիական հետազոտությունների միջազգային ինստիտուտ, Լոնդոն
5. Ռուսաստանի կառավարման բարձրագույն դպրոց, Մոսկվա
6. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության և Հնագիտության ու ազգագրության ինստիտուտներ
7. «Հայքե ինստիտուտ
8. ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն (Երևան)
9. Կովկասյան լրատվամիջոցների ինստիտուտ (Երևան)
10. «Երկիրե միություն (Երևան):

Կապեր են հաստատվել Իրաքի և Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների կառույցների ու անհատ գործիչների, ինչպես նաև ՀՀ-ում ԱՄՆ, Միրիայի, Ուկրաինայի դեսպանությունների հետ:

2008թ. ծրագրերը

Ա. Հրատարակչական և տեղեկատվական ուղղություն

Պատրաստվում են հրատարակման.

Հասմիկ Հմայակյանի «Հայ արվեստի և մշակույթի առանձնահատկությունները համաշխարհային քաղաքակրթության համատեքստում» մենագրությունը՝ «Նորավանք» ԳԿՀ Տեղեկագրի տեսքով, և «Մեր հաղթանակները մատենաշարը:

«21-րդ ԴԱԸ հանդեսի 4 համար - «21-րդ ԴԱԸ հանդեսի 1 (19), 2 (20), 3 (21), 4 (22) համարները, «21-ий Век» ռուսալեզու հանդեսի 1 (7), 2 (8) համարները, «21-st Century» անգլիալեզու հանդեսի 1 (3), 2 (4) համարները:

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկագիր՝ նվիրված այլալեզու և այլադավան հայերի հիմնախնդիրներին:

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկագրի հատուկ թողարկում՝ նվիրված «Հայկական համայնքներն արդի փուլում» 2-րդ գիտաժողովի (հունիս, 2008թ.) նյութերին:

«Գլոբուս տեղեկագրի 20 համար և **«Գլոբուս էներգետիկան տեղեկագրի** 12 համար:

Հիմնադրամի www.noravank.am կայք և գրադարան - Նախատեսվում է ստեղծել նոր թեմատիկ բաժիններ՝ ըստ հետազոտությունների թեմատիկ ուղղվածությունների: Գրադարանի հետագա համալրումը կախված է հիմնադրամի կողմից Հայաստանից դուրս հրատարակումների գնման հնարավորություններից: Նախատեսվում է մեծացնել էլեկտրոնային փոխանցումների միջոցով ձեռք բերվող հրատարակությունների քանակը և կնքել պայմանագիր գրականություն ներկրող կազմակերպությունների հետ:

Բ. Հետազոտական-վերլուծական ուղղություն

«Տեղեկատվական և հոգևոր անվտանգության խնդիրների ուսումնասիրություններ թեմայի 2008թ. պլանները (ղեկավար՝ Գագիկ Հարությունյան)

- Շարունակել «Մեր հաղթանակները խորագրով ուսումնասիրությունը և իրականացնել հետազոտության քառահատորյակի հրատարակչական աշխատանքները: Կազմակերպել նաև ռուսերեն թարգմանությունն ու տարածումը: Իրականացնել «Մեր հաղթանակները ուսումնասիրության դրույթները հանրությունում տարածելու և ներդնելու միջոցառումներ՝ հեռուստահաղորդաշար, ֆիլմաշար և այլն:
- Շարունակել «քրիստոնեական դաստիարակություններ շարքից երեխաների և երիտասարդների համար հոգևոր-կրոնական ուղղվածությամբ գրականության ընտրանու (արևելահայերենով) հրատարակությունը:
- Աշխատանքներ սկսել տեղեկատվական անվտանգության հիմնադրույթների ձևավորման ուղղությամբ:

5. Փորձագիտական խորհրդի աշխատանքները, կոնֆերանսներ, սեմինարներ և PR գործունեություն

Պատասխանատու՝ Արարս Փաշայան

Հիմնադրամում կազմակերպվել են միջազգային 1 կոնֆերանս, փորձագիտական խորհրդի 12 նիստ և 13 սեմինար:

«Հայկական համայնքներն արդի փուլում. գոյապահպանություն, հեռանկարները միջազգային կոնֆերանս 2007թ. (հունիսի 19-20). Կոնֆերանսն ուներ գիտական և գործնական կարևոր նշանակություն: Մասնավորապես՝ հայկական համայնքների վերաբերյալ գիտաժողով տեղի էր ունեցել 1987-ին: Կոնֆերանսի մասնակիցներն էին փորձագետներ Նովոսիբիրսկից, Կրասնոդարից, Ստավրոպոլից և այլ քաղաքներից, դիվանագետներ, փորձագիտական, վերլուծական և գիտական կենտրոնների, ՀԿ և ՋԼՄ ներկայացուցիչներ: Կոնֆերանսի կազմակերպումը նպատակ ուներ մշակել հայության ինքնության ապահովման արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաև տեղեկատվական շրջանառության մեջ դնել հայկական համայնքների հոգևոր անվտանգությանն առնչվող հիմնախնդիրները: Կոնֆերանսում առաջ քաշված հիմնահարցերը որոշակի հնչեղություն ստացան գիտական և հասարակական շրջանակներում:

Փորձագիտական խորհրդի նիստերում (տես հավելված 4) քննարկվել են «Հայաստանի հաղորդակցային անվտանգությունը. առկա իրավիճակը, հետևություններ, հեռանկարները թեմայով միջազգային մրցույթի կազմակերպման, «Հայկական համայնքներն արդի փուլում. գոյապահպանություն, հեռանկարները միջազգային գիտագործնական կոնֆերանսի կազմակերպման, Սամվել Մարտիրոսյանին պատվիրված «Ռեզոլուցիայի քաղաքական հարավային Կովկասի տարածաշրջանում ուսումնասիրության, Խ.Դադայանին պատվիրված «Բաքուն և հայերը գրքի ռուսերեն հրատարակության, «Гарегин Нжде и КГБ» նյութի գիտական հրատարակման, «Նորավանք գիտակրթական հիմնադրամի շրջանակներում Հայագիտական տեղեկատվական համակարգող կենտրոնի, Քաղաքագիտական հետազոտական կառույցի ստեղծման, ինչպես նաև այլ հարցեր:

Սեմինարներ. Կազմակերպվել է 13 սեմինար՝ 8 «Հասարակագիտական հետազոտություններին և 5 «Քաղաքական հետազոտություններին ծրագրերի շրջանակներում (տես հավելված 4):

Հասարակագիտական և քաղաքագիտական ուղղվածությամբ սեմինարներում քննարկված հարցերը ներկայացվել են **միջդիսցիպլինար հետազոտությունների համատեքստում՝** ներառելով թե՛ հասարակագիտական, թե՛ քաղաքագիտական ուսումնասիրությունների ոլորտները: Սեմինարներին հրավիրվել են Հայաստանի փորձագիտական, գիտական, վերլուծական և ուսումնական, տեղեկատվական-վերլուծական կենտրոնների, թերթերի և ամսագրերի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև օտարերկրյա բանախոսներ:

Հասարակության հետ կապերի հաստատման (PR) աշխատանքը. Այս ոլորտում պետք է կարևորել Հիմնադրամի փորձագետների կողմից ՋԼՄ-ին տրված մի քանի տասնակ վերլուծություններն ու հարցազրույցները, որոնցում ներկայացվել են որոշակի հիմնահարցերի և տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ Հիմնադրամի հայեցակարգային մոտեցումները: Դրանցից մի քանիսը (մասնավորապես՝ «բազմաբևեռ և ասիմետրիկ Սառը պատերազմին, Հայաստանի՝ որպես ինքնուրույն քաղաքակրթական միավորի և այլն) այսօր դրվել են տեղեկատվական շրջանառության մեջ:

Նշենք նաև, որ *Բնտերնետի հայերեն, անգլերեն և ռուսերեն տարբերակներում «Նորավանքե հիմնադրամի մասին կա մոտ 40.000 հիշատակում (անգլերենում՝ 15.000, ռուսերենում՝ 20.000, հայերենում՝ 5.000):*

6. «Գործունեության ապահովման ծրագիր

Ղեկավար՝ Ջավեն Բարսեղյան

2007թ. կատարվել են «Նորավանք գիտակրթական հիմնադրամի գործունեության ապահովման ծրագրի գծով հետևյալ աշխատանքները:

«ՀայՌուսԳազԱրդե ՓԲԸ-ի հետ կազմվել են «Նորավանք ԳԿՀ-ի կողմից վերլուծական աշխատանքի իրականացման և դրա հիման վրա՝ «Գլոբուս Էներգետիկե տեղեկագրի հրատարակման պայմանագրերը: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր ամիս «ՀայՌուսԳազԱրդե ՓԲԸ-ին է տրամադրվում «Գլոբուս Էներգետիկե տեղեկագրի 30 օրինակ, որի դիմաց «Նորավանք ԳԿՀ-ն ստացել է պայմանագրով նախատեսված **5400,0 հազ.դրամ** գումար: Բացի այդ, 2007թ. «Նորավանք ԳԿՀ-ի 21-րդ ԴԱՐԵ հանդեսը բաժանորդագրվել են «ՀայՌուսԳազԱրդե ՓԲԸ-ն, ՀՀ Կենտրոնական բանկը, ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամը, իսկ բաժանորդագրություններից մուտքերը կազմել են **1489,0 հազ. դրամ:**

Շարունակվել են «Նորավանք գիտակրթական հիմնադրամի պատվիրված գիտական աշխատանքների, հոդվածների, գրախոսությունների և նմանատիպ այլ նյութերի՝ ըստ ուղղությունների համակարգման, խմբավորման և արխիվացման աշխատանքներ: Ապահովվել են «Նորավանք ԳԿՀ-ի հետ կնքված պայմանագրերի, ստացված գիտական նյութերի գրանցման մատյանների վարման աշխատանքները:

2007թ. «Նորավանք գիտակրթական հիմնադրամը ձեռք է բերել **6764,0 հազ. դրամի** ապրանքանյութական արժեքներ, այդ թվում՝ սարքավորումներ և համակարգչային տեխնիկա 2055,0 հազ. դրամի, նյութեր և այլ ապրանքներ՝ **1150,0 հազ. դրամի, կահույք 3559,0 հազ. դրամի**, կատարվել են 4900,0 հազ. դրամի կոմունալ ծախսեր:

2007թ. առաջին անգամ գործունեությունը սկսած «Ուսումնական ծրագրի ապահովման համար 4-րդ հարկում կահավորվել է ուսումնական լսարան, որի համար ձեռք են բերվել ուսումնական սեղաններ, աթոռներ, պահարաններ և անհրաժեշտ այլ կահույք, սարքավորումներ և գույք՝ շուրջ **3000,0 հազ. դրամի:**

2007թ. իրականացվել է «Նորավանք ԳԿՀ-ի 6-րդ հարկի հիմնական վերանորոգումը. 6-րդ հարկի հիմնական նորոգման աշխատանքների համար ծախսվել է **5114,2 հազ. դրամ:**

ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովագրության նախարարության Աշխատանքի տեսչության կողմից 2007թ. նոյեմբեր ամսին կատարվել են «Նորավանք ԳԿՀ-ում նախորդ տարիներին ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի վարձատրության ճշտության հետ կապված հարցերի համալիր ստուգումներ: Դրանց արդյունքում խախտումներ չեն արձանագրվել: Աշխատանքի տեսչության կողմից խախտումներ չլինելու մասին կազմվել է տեղեկանք, որը վկայում է «Նորավանք ԳԿՀ-ում աշխատանքների բարձր մակարդակով կազմակերպման մասին:

2007թ. կազմվել և ՀՀ կառավարության աշխատակազմին է ներկայացվել նաև «Նորավանք ԳԿՀ 2008թ. բյուջետային հայտը: Այն ներառել է «2008-2010թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերե-ով 2008թ. համար «Նորավանք ԳԿՀ կանոնադրական նպատակների, ծրագրերի իրականացման համար նախատեսված 95 մլն դրամը, ինչպես նաև 2008թ. շահագործման հանձնվող, «Նորավանք ԳԿՀ-ին սեփականության իրավունքով պատկանող Վայոց ձորի մարզի Ամաղու գյուղի տարածքում գտնվող գիտաուսումնական համալիրի պահպանման համար լրացուցիչ **22,2 մլն դրամը**, և 2008թ. բյուջետային հայտի ընդհանուր մեծությունը կազմել է 117,2 մլն դրամ:

Կցվում է «Նորավանք ԳԿՀ 2007թ. ստացված միջոցների և կատարված ծախսերի մեծությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ աղյուսակի տեսքով (**Հավելված 5**):

2008թ. ծրագրերը

Ճշգրտվել է «Նորավանքե ԳԿՀ սեփականության իրավունքով պատկանող Վայոց ձոր մարզի Ամաղու գյուղի տարածքում գտնվող գիտաուսումնական համալիրի վերանորոգման աշխատանքների ընթացքը, որոնք ՀՀ կառավարության որոշմամբ ընդգրկված են պետական պատվերի (գնումների) շրջանակներում և իրականացվում են Քաղաքաշինության նախարարության կողմից: 2008թ. նախատեսված է իրականացնել շենքի հիմնական նորոգման մնացած աշխատանքները` 70 մլն դրամի ծավալով: Նախատեսվում է, որ 2008թ. նշված շենքը շահագործման համար պատրաստ վիճակում կհանձնվի «Նորավանքե ԳԿՀ-ին: Այսինքն` 2008թ. Ամաղու գյուղի նշված համալիրի ինչպես պահպանման, այնպես էլ կահավորման համար անհրաժեշտ են լինելու ֆինանսական միջոցներ, որոնք ներկայումս նախատեսված չեն «Նորավանքե ԳԿՀ-ի ֆինանսական հատկացումների մեջ:

Մեր կողմից կատարված նախնական հաշվարկով «Նորավանքե ԳԿՀ-ին սեփականության իրավունքով պատկանող Վայոց ձորի մարզի Ամաղու գյուղի տարածքում գտնվող գիտաուսումնական մասնաշենքի 2008թ. շահագործման հանձնելու դեպքում «Նորավանքե ԳԿՀ-ին լրացուցիչ անհրաժեշտ է 22,2 մլն դրամ, որից`

1. Սպասարկման անձնակազմի և սոցապվճարի ծախսեր` 3 200 000 դրամ, այդ թվում`

- պարետ - 1 միավոր - ամսական 70 000 դրամ - տարեկան 840 000 դրամ
- պահակ - 2 միավոր - յուրաքանչյուրը ամսական 40 000 դրամ - յուրաքանչյուրը տարեկան 480 000 դրամ, ընդամենը տարեկան 2 միավորի համար 960 000 դրամ
- այգեպան - 1 միավոր - ամսական 40 000 դրամ - տարեկան 480 000 դրամ
- հանդերձապահ - 1 միավոր - ամսական 40 000 դրամ - 3 ամսվա համար 120 000 դրամ
- հավաքարար - 1 միավոր - ամսական 40 000 դրամ - 3 ամսվա համար 120 000 դրամ
- խոհարար - 1 միավոր - ամսական 50 000 դրամ - 3 ամսվա համար 150 000 դրամ
- սոցապվճարներ - 520 000 դրամ
- Կահավորման ծախսեր 14 000 000 դրամ, այդ թվում`
- կահույքի (սեղաններ, աթոռներ, պահարաններ և այլն) ձեռքբերման ծախսեր 5 000 000 դրամ

2. Մարքավորումների (համակարգիչներ, հեռախոսներ, հեռուստացույցներ և այլն) ձեռքբերման ծախսեր` 5 000 000 դրամ

- տնտեսական գույքի ձեռքբերման ծախսեր` 2 000 000 դրամ
- գրենական պիտույքների ձեռքբերման ծախսեր` 800 000 դրամ
- տնտեսական նյութերի ձեռքբերման ծախսեր` 500 000 դրամ
- տրանսպորտային ծախսեր` 700 000 դրամ

3. Կոմունալ ծախսեր` 5 000 000 դրամ, այդ թվում`

- էլեկտրաէներգիայի ծախս` 1 000 000 դրամ
- հեռախոսային կապի անցկացման և բաժանորդագրման ծախս` 1 500 000 դրամ
- ինտերնետային կապի ծախս` 500 000 դրամ
- ջրամատակարարման ծախս` 200 000 դրամ
- ջեռուցման համար գազի կամ այլ վառելիքի ծախս` 1 500 000 դրամ

4. Այլ ծախսեր` 300 000 դրամ:

Հիմնադրամի ծրագրերի իրագործման համատեքստում հրատապ են նաև Գ.Նժդեհ 23/1 հասցեում գտնվող Հիմնադրամի շենքի 5-րդ հարկի վերանորոգումը (18,7 մլն դրամ) և 4, 5, 6 հարկերի գազաջեռուցման (3,2 մլն դրամ) իրականացումը:

**«Հասարակագիտական հետազոտություններն ծրագրի շրջանակներում
հրատարակված աշխատանքները (թվով 173)**

Թեմա. «Տեղեկատվական և հոգևոր անվտանգության (կիրառական հայագիտության) խնդիրների ուսումնասիրությունն (Յ3)

Հիմնարար հետազոտություններ

1. Արման Կիրակոսյան, Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը
2. Կարինե Տեր-Գրիգորյան, «Հայրեր, մայրեր, որդիներ Գրքույկ՝ «Քրիստոնեական դաստիարակությունն շարքից:
3. Ваче Овсеян, «Гарегин Нжде и КГБ. Воспоминания разведчика»

«21-րդ ԴԱԸՆ հանդես

4. Արտյոմ Սարգսյան, «Հայ-բյուզանդական քաղաքակրթական առնչությունների շուրջ», թիվ 1, 2007թ.
5. Նվարդ Մելքոնյան, «Առաջնորդի իմիջը քաղաքական գովազդում», թիվ 1, 2007թ.
6. Հարություն Մարության, «Հիշողության կառավարման խնդիրները», թիվ 2, 2007թ.
7. Սամվել Մարտիրոսյան, «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության մի քանի հարցեր», թիվ 2, 2007թ.
8. Լյուդվիգ Խաչատրյան, «Ինքնության տոհմաձառը», թիվ 2, 2007թ.
9. Տիգրան Սարգսյան, «Ինչպե՞ս իրականացնել հեղափոխություն», թիվ 2, 2007թ.
10. Արա Մարջանյան, «Հերիթըջ Ֆաունդեյշնի տնտեսական ազատությունների շուրջ», թիվ 3, 2007թ.
11. Հարություն Մարության, «Կոլեկտիվ և պատմական հիշողությունը մշակույթների երկխոսությունում», թիվ 3, 2007թ.
12. Հայկարամ Նահապետյան, «Թուրք-ադրբեջանական հակահայ լոբբինգը Միացյալ Նահանգներում», թիվ 4, 2007թ.
13. Միքայել Ջոլյան, «Ազգային քաղաքականությունը Խորհրդային Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղի խնդիրը», թիվ 4, 2007թ.

«21-й Век», 2007 (русскоязычное издание)

14. Тигран Саркисян, «Армянская цивилизация как амбициозный проект», N 1, 2007.
15. Арутюн Марутян, «Теоретические вопросы управления памятью», N 1, 2007.
16. Гагик Арутюнян, «Армения в глобальном мире», N 2, 2007.
17. Тигран Саркисян, «Как осуществить революцию?», N 2, 2007.
18. Самвел Мартиросян, «Некоторые вопросы информационной безопасности Республики Армения», N 2, 2007.
19. Арутюн Марутян, «Историческая память в диалоге между культурами», N 2, 2007.

“21-st Century”, 2007 (English language edition)

20. Nvard Melkonyan - “Image of a leader in political advertising”, N 1, 2007.
21. Tigran Sargsyan - “Armenian civilization: a bid for ambitious project”, N 1, 2007
22. Harutyun Marutyan - “The memory management issue”, N 1, 2007.
23. Tigran Sargsyan - “How to make a Revolution?”, N 2, 2007.
24. Harutyun MArutyan - “Collective and Historical Memory in the Dialogue of Cultures”, N 2, 2007.
25. Georgi Derlugian - “Azeri Orientalists as Mirror of the Postsoviet Revolution”, N 2, 2007.

«Գլոբուսե վերլուծական տեղեկագիր

26. Գագիկ Հարությունյան, «Հայագիտության ազգային ռազմավարության հայեցակարգային որոշ դրույթներ», թիվ (1), 2007թ.
27. Գագիկ Հարությունյան, «Հոգևոր-կրոնական գործոնի դերը քաղաքական դաշտում», թիվ (2), 2007թ.

28. Վահրամ Հովյան, «Տեղեկանք աշխարհում տարբեր կրոններ դավանող մարդկանց թվաքանակի և դրա դինամիկայի վերաբերյալ», թիվ (2), 2007թ.
29. Գագիկ Հարությունյան, «Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ», թիվ (4), 2007թ.
30. Սերգեյ Մինասյան, «Стратегия Национальной безопасности Республики Армения: процесс принятия и структура документа», թիվ (4), 2007թ.
31. Մանուկ Հերզնյան, «Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի աճի մոդել», թիվ (5), 2007թ.
32. Թամարա Վարդանյան, «Ինտերնետային ֆորումները՝ որպես մեթոդ և աղբյուր», թիվ (6), 2007թ.
33. Խաչատուր Դադայան, «Թուրքական քարոզչություն՝ փոխհատուցման դիմաց», թիվ (6), 2007թ.
34. Հարություն Մարության, «Ցեղասպանության հիշողությունն իբրև գործոն», թիվ (7), 2007թ.
35. Սուրեն Մանուկյան, «Ցեղասպանությունների ժխտումը և դատապարտումը», թիվ (7), 2007թ.
36. Սամվել Մարտիրոսյան, «Некоторые вопросы информационной безопасности Армении и армянства», թիվ (7), 2007թ.
37. Արաքս Փաշայան, «Հանդիպում ՀՀ-ում Սիրիայի դեսպանության խորհրդակցական Վախլ Դերքիի հետ», թիվ (7), 2007թ.
38. Միխայիլ Աղաջանյան, «Александретский Санджак: потерянная родина армян», թիվ (8), 2007թ.
39. Միխայիլ Աղաջանյան, «Алавиты: потомки киликийских армян? Путь от упущенной государственности к формированию политической элиты», թիվ (8), 2007թ.
40. Հարություն Մարության, «Յադ Վաշեմ. Հոլոքոստի մասին հիշողությունն Իսրայելում», թիվ (10), 2007թ.
41. Հարություն Մարության, «Յադ Վաշեմ ու Իսրայելի հասարակությունը», թիվ (11), 2007թ.
42. Հայկարամ Նահապետյան, «Ադրբեջանում ապատեղեկատվության ուղղությամբ նպատակային աշխատանքի ծավալման վերաբերյալ», թիվ (12), 2007թ.
